

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արձաթ Մէճիս պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազան ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Արագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է լւղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. ԱՆՆԱՆՈՐԻՋ ԵԿԵՂԵՍՅԱՅ ՎԱՐԻ ԴՐԱՆԸ ԿԻՅ ՆՈՐ ԳՐԱՏԱՆԸ :

### Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն

#### ՅԱԿՈՐԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Չմիւռնիոց Արշալոյս և Պօլոյ Մասիս լրագրաց մէջ Աղեկաանդրիոյ Յակորեան հռչակաւոր թագաւոր ազայի ազգային մետատանամեայ պաշտօնէութեան կամ փոխանորդութեան տեղեկագրոյն հրատարակութիւնը, և յիշեալ լրագրաց գովեստներն կարգացուցան այս վերջին օրերն : Սոյն տեղեկագրին պատճէնը կարևոր ծանօթութեանց հետ մեզի ալ զրկուած է, բայց մենք զանց ընելով տեղեկագրին հրատարակութիւնը, միայն անոր վրայ թէ Եգիպտոսայոց և թէ մեր ունեցած գիտողութիւնները կհրատարակեմք այս անգամ խիստ համառօտ կերպիւ :

Ա.—Տեղեկագրին ամբողջ պարունակութիւնը կ'յայտնէ թէ Յակորեանը ինչ աստիճան պարծենկոտ մարգարէ եղեր : 44 տարի յառաջ Աղեկաանդրացւոց ազգային վիճակը մնանկութեան մէջ կգտնուի, և այժմ 440 000 տարեկան եկամուտի մը տէր ( " " ) է եղեր : Ինչ զարմանալի արդիւնաւորութիւն : Թագաւոր ազան

պէտք էր որ իր տեղեկագիրը աւելի ընդարձակէր և 44 տարի յառաջ Աղեկաանդրիոց ազգային կայրածոց վիճակը յայտներ, և յետոյ հեռագրէ տէ աւելցուցած կայրածները նշանակէր :

Բ.—Տեղեկագրին առաջին պարբերութեան կերևոյ որ Աղեկաանդրիոյ մէջ « Հայոց ազգ » ըսելով փեմ. Նուպար փաշան պիտի խնայանք, ու անոր փոխանորդը Յակորեան թագաւոր ազան : Ժողով կողմեր է, չէ թէ իւր հրատարականք անոր տալու, այլ իր հրատարած ըլլալը Եմսոյունելու համար : Ըսել է թէ Աղեկաանդրացւոց մօրուքին կիմուայ և ինք իրքեւ արածուութեան տէր կըսէ թէ « այսուհետեւ նոր հոգարար ձուն ընդհանուր ազգին պտտասիրանատու է », բայց ոչ ինքք :

Գ.—60 ոսկի եկամուտ բերող տուն մը ի հիմանց նորոգել ըսելով ինչ պիտի խնայանք : Քակեր ու նորէն շիներ է, որ 233,000 զուրուշի ահագին գումար մը ծախք գացեր է : Մեզի կիմսոյունեն թէ միայն նորոգութիւն մը էր եղածը, և ծախք եղած այնչափ գումարով առնը ի հիմանց կրկին կըր-

նար շինուիլ : Արդեօք այս ծախքին տեսարակը կրնայ հրատարակել, և կըրնայ մեզի ցուցնել թէ իր քսակէն ըստակ տուած է առանց պահասի :

Գ.—Վարժարանը ընդարձակելու, վարժապետներ շատցունելու, աշակերտներուն հազուատ շինելու, հայլըն, և այլն, սարբերութեանց դատով, չեմք կրնար մեր ծիծաղը բռնել. առնք այնպիսի խօսքեր են որ հրատարակ գալու արժանի չեն : Ազգին ստակովը գարոց շիներ է. ազգին ստակովը վարժապետ տարեր է. ազգին ստակովը հազուատ շիներ է. ազգին ստակովը հիւանդներ նայեր է. վերջապէս ամեն բան ըրեր է ազգին ստակովը. ասկէց ինչ կհետեի :

Ե.—Ընդարձակ գերեզմանատան մը շինութեան հոգ տարի բաժին համար մեզի կիմացունեն թէ եկեղեցիին պարտիզին և փոքրիկ գերեզմանատան մէջ տեղը գանուած պատք քակեր, պարտէզն ու գերեզմանատունը իրար խառնուեր և բնականաբար ընդարձակեր է : Այս է « շինեցի » ըսածը :

Զ.—Ընդհանուր ժողով և քննիչ յանձնաժողով ըսածը բարբոսի են բեհայական բաներ են : Մեր առաջին գիտալութիւնը կարգարայուններ ըսածը : Եղիպատսի իշխանութեան արտաքին դործոց պաշտօնեաց վեհմ. Նուպար փաշան ազգին գործոց տէրն է. Թագւոր ազան անոր փոխանորդն է : Ասոնց ազգեցութիւնը Ազեկահայրիոց մէջ ընդհանուր ժողով ալ կրնայ կազմել ( որովհետեւ կազմողն իրենք են, ինչպէս ինք ալ կրան տեղեկազրին մէջ ), իրենց ուղածներէն քննիչ յանձնաժողով ալ կրնայ

կազմել, իրենց ուղած կերպովը կրնայ հաշիւները քննել տալ . . . տրեմին յունով. 19ին ընդհանուր ժողովոց անուսով անսարատ եղնելը չկրնար ապացուցուիլ : Թագւոր ազան կրնայ ստակ շինացելով տապալու թեանի հրատարակել տալ իւր բոլոր հաշիւները ի ծանօթութիւն ընդհանուր ազգին :

Թագւոր ազան կրնայ թէրեքեկց գործերը մասնաւոր տեղեկազրով հրատարակել, որ տեղեկազրին մէջ մտած ձգուած է, և ընդհանուր ժողովէն « դուք գիտէք արդէն » ըսելով ծածկուած է :

Թագւոր ազան կրնայ Նրուսաղի մայ կալուածոց հաշիւները մասնաւոր տեղեկազրով հրատարակել . . . :

Թագւոր ազան կրնայ Գարտեանի կտակին ինչ ըլլալը հրատարակու բացարեւ : Այս մեծ ու կարեւոր խորհրդը, որուն հետքն անգամ չըշմարեցինք տեղեկազրին մէջ, ընդհանուր ազգը երբէք չպիտի մոռնայ, և չպիտի թողու որ այն բացուած ծակը միշտ բաց մնայ . . . :


Այս անդամ այսչափ :

Մեկ կողմանէ կտենք թէ, Եղիպատս գանուող Յակոբեան եղբարք կհրաժարին Եղիպատսի ազգային գործերէ, միւս կողմանէ ընդհակառակն կխմանանք թէ տակաւին ազգային խնդիրներու մէջ կդանուին :

Անցեալները խառն ժողովը որոշեց որ, Նրուսաղի մայ կալուածոց խնդրոյն պատճառաւ ժամանակէ մը ի վեր Գահիրէ գանուող գեր. Իդնա տիտ արքեպիսկոպոսն վարէ Եղիպ

առաջ առաջնորդ ակաճ փոխանորդ ու  
թեան սրաշածեր, մինչև ազգային  
աստիճանագրութեան հաստատուիլը :  
Այս որոշման գործադրութեան վե-  
րաբերեալ բոլոր պաշտօնական գը-  
րութիւններն ալ արդէն ճամբուեցան :

Արդ՝ եթէ ստոյգ է մեր ընդու-  
նած տեղեկութիւնը, ազգային գոր-  
ծերէ հրատարեալ Յակոբեան եղբարք  
կանան եղեր՝ վարչութեան այս ու-  
րաշումն անգործադրելի ընել և իրենց  
ուզածն բերել յեղիպոսս : Հետևա-  
բար այս անձինքն սակաւին յոգնած  
չն ազգային գործերու մէջ գըտ-  
նուելէ, և կու գեն որ ամեն ատեն ի-  
րենց կամբը ախպարեմէ : Սակայն  
գիտապաւ են որ այսուհետև թոյլ չը  
պիտի արուի իրենց ուզածնուն պէս  
առնել ծախերը :



ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Երբումի կուտակալութեան կեդ-  
րանական միութեարքի անուանեցաւ  
Պայազխի նախարգ միութեարք Միւ-  
նիսց փաշա :

— Պայազխի միութեարքի կար-  
գեցաւ Երբումի ընդհանուր կառա-  
վարչի նախարգ օգնական թէվֆիզ  
պէյ :

— Պաշտօնէից Ժողովոյն անդամ  
Շէրէֆ Ապի փաշային առաջին կար-  
գի Մէճիտիյէ պատուանշան շնորհե-  
լ :

— Տրամայի մէջ մէկ քանի անձինք  
ընկերութիւն մը կազմեր են, բանպա-  
կի մեծ գործարան մը հաստատելու  
համար :

— Կրտսի թէ՛ Աւստրիոյ կառա-  
վարութիւնը զօրաց թիւը պիտի գիւշ-

յունէ, զինուորական ծախքը թեթե-  
ցունելու դիտմամբ :

— Լատ. ապրիլ 3ին դիշերը Լոն-  
տոնի մէջ 14 տեղ հրդեհ պատահե-  
լով, ընդ ամէնը 9 տուն այրեր են :

— Անգղիոյ մէկ ամխահանքն անց-  
եալները կրակ առնելով, մէջը գըտ-  
նուող 200 գործաւորաց 20—33ին  
մահուան պատճառ եղեր է :

— Աւստրիոյ մէջ այս միջոյին  
խիստ սաստիկ տաքութիւն կայ, և  
մարդոց ու կենդանեաց և բուսոց մեծ  
զնաս կհասցունէ եղեր :

— Անցեալները Գըւիս—Ֆարեյու-  
սոյ ըսուած տեղը հրդեհ պատահին  
խնայուցինք : Այս հրդեհը արեդա-  
կին Չերմութեանէն պատճառելով, մէկ  
քանի կազմերէ բռնկեր և երկրագոր-  
ծաց մեծ մնաս հասցունելէն զատ շատ  
մարդոց ալ մահուան պատճառ եղեր է :

— Բուսնուգի մէջ նախորդ ամսոյն  
19ին առաւօտեան ժամը 12ին առնե-  
ները երեք անգամ թեթեւ գեանա-  
շարժ պատահեր է :

— Անցեալ 1868ին Կէշիպօլիէ բամ-  
պակի բերքը 3000 հակ է եղեր, և  
ամենմէկ օխան Թական դուրուշի ծախ-  
ուեր է :

— Աւստրիոյ կառավարութիւնը ու-  
րաչեր է որ, Հանովրայի զինուորական  
հրամանատար մը՝ եթէ ուղէ Աւստրիոյ  
ժառայել, իր արդէն ունեցած աս-  
տիճաններովն ընդունուի :

— Փարիզի ամերիկեան դեսպանը  
բաղմաթիւ լրատրաց մէջ ի պաշտօնէ  
յայտարարութիւն ըրեր է թէ՛ Ամե-  
րիկայի հասարակապետութիւնը եր-  
բէք կողմնակից գանուած չէ հեղե-  
նացոց, և թէ՛ այս մասին եղած ա-  
մեն ստորաձայնութիւնք անհիմն են :

—Քէմպրիի բժիշկները հետա-  
քրքրութեամբ դիտարկելով թիւն մը բրեր են  
մտաւատենններս : Երբի մը բազուկին  
վրայ վերք մը կար, որ երկար ատենէ  
ի վեր չէր բժշկուած : Օր մը ծերը կը  
նայի որ բողբոջի պէս բան մը դուրս  
կուտայ վերքը : Հետեւեալ օրը ուրիշ  
մ'ալ, և այսպէս երեք օրուան մէջ  
երեք հաա բողբոջներ, որոնք միա-  
նալով վեց ամսէն կատարեալ եղջիւր  
մը կկազմեն. եղջիւրին խարխիւր հինգ-  
հարիւրամեթր և երկայնութիւնը 22  
հարիւրամեթր էր և ցուլի եղջեր նման  
քիչ մը ծռած : Բժիշկները հաներ են  
այս եղջիւրը :

—Նիւ—Եօրքի մէջ բժիշկ մը կատ-  
ղած շունէ վիրաւորեալ անձ մը դար-  
մանելու կանչուելով արիւն առնել  
կուտայ և ձեռքը հիւանդին թաշկի-  
նակովը կորքէ : Յուցամատը փոքրիկ  
վերք մը ունենալով անմիջապէս կը  
հասկնայ ըրած անխոհեմութիւնը :  
Բայց իւր նոր գտած եղանակին հա-  
մեմատ, ձեռքը ջրով կուտայ : Այս  
բանս ութ օր իրարու վրայ բրի, կըսէ  
բժիշկը, աղէկ դիտնալով որ 40 օրէն  
կընար այս հիւանդութիւնը յայտ-  
նուիլ : Բայց իններորդ օրը աչքս և  
որկորս սկսաւ ցաւիլ, սաէպ թուք  
լորձաւնք կուզար բերնէս, և կուզէի  
ոչ թէ միայն մարդ այլ և կենդանի և  
լինչ որ կտեննէի խածնել : Գժուարաւ  
կխմէի, և կըխտէի որ ջուրը միայն աւե-  
նելով որկորիս ազգած ցաւէն աւելի  
սաստիկ ցաւ կըզայի : Հինգ փայրկեա-  
նէ հինգ փայրկեան կըզայի որ ցաւը  
ցուցամատէս կտարածուի մինչև ուտ-  
ջերուս միջոցս : Խորհեցայ որ պակ-  
ս մը բնեմ, ոչ թէ այս հիւանդութենէս  
բժշկուելու մտօք, այլ աւելի ինքզին-

քըս խղեւով՝ վերծիլ այս սաժանե-  
լի կեանքէս : Արդ՝ պակ-ս 37° տա-  
քութիւն ունենալով մտայ մէջը, և  
ահա վրաս երեցած նշանները անհետ  
եղան, և մէյ մ'ալ բան մը չըզայի :  
Այս միևնոյն միջոցով 80 հոգի բժշ-  
կեցի, որոնք կատարած շունէ վիրա-  
ւորեալ էին և ամենքնին ալ ազատե-  
ցան : Երբոր մէկը այսպիսի հիւան-  
դութիւն մը ունենայ, օրը անգամ մը  
պակ-ս ընէ 37° կամ մինչև 63° տաքու-  
թիւն ունեցող ջրով, այս կերպով կըր-  
նայ բժշկուիլ և ազատիլ վտանգէն :  
Երբ հիւանդութիւնը յայտնուի, պ-  
սինքն շան մը կատարութիւնը երեւոյ,  
նախ 37° տաքութիւն ունեցող ջրով  
պանեօ ընել, յետոյ մինչև որ հիւան-  
դը աղէկ մը բժշկուի, պէտք է որ իւր  
սենեակին մէջ փակուած մնայ » :

Ռատիկանութեան պաշտօնատան  
կողմանէ կժանուցուի թէ՛ Հասրըճինե-  
րուն մէջ փողոցը գտնուած դորտ-  
նով ժամացոյց մը պահուած բլբլով,  
այսպիսի ժամացոյց մը կորսնցունողը  
պէտք է Տէրը—Մատտէթ Մէճլիսի  
Թէէմիզը ներկայանայ :

Քանի մը պատուաւոր տուներու  
համար պարկեշտ երիտասարդներ կը  
մնտուռին, բուական ուսեալը վարժա-  
պետութիւն ընելու համար : Եթէ այս  
տեսակ պաշտօնի փափաքը կար կընայ  
դալ Ղալ Թիթիոյ Ամենախրկչի վարժա-  
րանը, տեսնել Փափագեան Էֆէնտին :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ  
Հ. Ս. Ա. Ա. ՔԱՅԻՆ

ՏՄԱԳՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՐԲԵՆՆ